ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 36 - Ա ք.Արտաշատ

„06" մարտ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արարատի մարզի «Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Գոռավանի միջնակարգ դպրոց», «Լուսառատի միջնակարգ դպրոց», «Պարույր Սևակի միջնակարգ դպրոց», «Պարույր Սևակի հիմնական դպրոց», «Գեղանիստի միջնակարգ դպրոց» , «Խաչփարի միջնակարգ դպրոց», «Սիսի միջնակարգ դպրոց», «Դիմիտրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոնների թափուր տեղերի համար հայտարարել մրցույթներ:

2. Մրցույթների նախապատրաստական աշխատանքների կատարման պատասխանատու ստորաբաժանում սահմանել մարզպետարանի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRÁK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**